ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 11-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի Ն 6-ԼՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-458-Ն օրենքի 3-րդ հոդվածի 14-րդ մասը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, 21-րդ հոդվածի 1-ին մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության (այսուհետ՝

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն) կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Անձնագրային և վիզաների վարչության քաղաքացիության բաժինը և Միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերադարձի և վերաինտեգրման բաժինը՝ մասամբ, միաձուլման եղանակով վերակազմակերպել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիության վարչության՝ քաղաքացիների հետընդունման մասով Միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերադարձի և վերաինտեգրման բաժնի իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և դադարեցնելով միաձուլվող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

2) Անձնագրային և վիզաների վարչության անձնագրային բաժինը վերակազմակերպել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային վարչության՝ դադարեցնելով վերակազմակերպվող կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը.

3) Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի հարցերի և իրավական ապահովման բաժինը՝ մասամբ, վերակազմակերպել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի վարչության՝ ապաստանի տրամադրման մասով Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ապաստանի հարցերի և իրավական ապահովման բաժնի իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և դադարեցնելով վերակազմակերպվող կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը.

4) Անձնագրային և վիզաների վարչության վիզաների և օտարերկրյա քաղաքացիների հաշվառման բաժինը և Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատանքային միգրացիայի և մոնիթորինգի բաժինը՝ մասամբ, միաձուլման եղանակով վերակազմակերպել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության օտարերկրացիների վարչության՝ աշխատանքային միգրացիայի մասով Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատանքային միգրացիայի և մոնիթորինգի բաժնի իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ և դադարեցնելով միաձուլվող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

5) Անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրի վարման և սպասարկման բաժինը և Հայաստանի Հանրապետության

քաղաքացու անձնագրերի կենտրոնացված տպագրության բաժինը միաձուլման եղանակով վերակազմակերպել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության տվյալների մշակման վարչության՝ դադարեցնելով միաձուլվող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը.

6) Ստեղծել կազմակերպա-վերլուծական, վիճակագրության և խորհրդատվության վարչություն՝ դադարեցնելով Անձնագրային և վիզաների վարչության կազմակերպական-հսկողական բաժին և իրավաբանական բաժանմունք աջակցող մասնագիտական ստորաբաժանումների գործունեությունը.

7) «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-457-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին համաձայն ուժի մեջ մտնելու պահից՝ դադարեցնել Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ինտեգրման հարցերի բաժնի և մասամբ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերադարձի և վերաինտեգրման բաժնի գործունեությունը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների, տեղահանվածների, երկարաժամկետ միգրանտների և հարկադիր վերադարձող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ինտեգրման կամ վերաինտեգրման մասով իրավունքների և պարտականությունների փոխանցմամբ.

8) Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետի ուժի մեջ մտնելու պահից՝ դադարեցնել Անձնագրային և վիզաների վարչության ֆինանսաբյուջետային բաժին, քարտուղարություն, կադրերի բաժանմունք, տնտեսական բաժանմունք և Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ֆինանսահաշվապահական բաժին, ընդհանուր բաժին աջակցող մասնագիտական ստորաբաժանումների գործունեությունը.

9) Միաձուլման եղանակով վերակազմակերպել Անձնագրային և վիզաների վարչության՝

ա. Շենգավիթի անձնագրային բաժանմունքը և Զարբախի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Շենգավիթի բաժնի.

բ. Կենտրոնական անձնագրային բաժանմունքը և Մարաշի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Կենտրոն 1 բաժնի.

գ. Նուբարաշենի անձնագրային խումբը և Երևանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Նուբարաշենի բաժնի.

դ. Արթիկի անձնագրային բաժանմունքը և Անիի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Արթիկի բաժնի.

ե. Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքը և Ախուրյանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Գյումրի 1 բաժնի.

զ. Աշոցքի անձնագրային խումբը և Ամասիայի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Աշոցքի բաժնի.

է. Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքը և Ախուրյանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Գյումրի 2 բաժնի.

ը. Գյումրի քաղաքի անձնագրային խումբը և Անիի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Գյումրի 3 բաժնի.

թ. Տաշիրի անձնագրային խումբը և Ստեփանավանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Տաշիրի բաժնի.

ժ. Ապարանի անձնագրային խումբը և Արագածի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Ապարանի բաժնի.

ժա. Արարատի անձնագրային խումբը և Արարատի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Վեդիի բաժանմունքի.

ժբ. Արմավիրի անձնագրային բաժանմունքը և Մեծամորի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Արմավիրի բաժնի.

ժգ. Սևանի անձնագրային բաժանմունքը և Ճամբարակի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Սևանի բաժնի.

ժդ. Մարտունու անձնագրային բաժանմունքը և Վարդենիսի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Մարտունու բաժնի.

ժե. Հրազդանի անձնագրային բաժանմունքը և Չարենցավանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Հրազդանի բաժնի.

ժզ. Նաիրիի անձնագրային բաժանմունքը, Նոր Հաճնի անձնագրային խումբը և Բյուրեղավանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Եղվարդի բաժնի.

ժէ. Կապանի անձնագրային բաժանմունքը և Քաջարանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Կապանի բաժնի.

ժը. Եղեգնաձորի անձնագրային բաժանմունքը և Վայքի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Եղեգնաձորի բաժնի:

10) Վերակազմակերպել Անձնագրային և վիզաների վարչության՝

ա. Արաբկիրի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Արաբկիրի բաժնի.

բ. Նոր Նորքի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Նոր Նորքի բաժնի.

գ. Ավանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Ավանի բաժնի.

դ. Քանաքեռ-Զեյթունի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Քանաքեռ-Զեյթունի բաժնի.

ե. Մալաթիայի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Մալաթիայի բաժնի.

զ. Էրեբունու անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Էրեբունու բաժնի.

է. Երևանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Կենտրոն 2 բաժնի.

ը. Մաշտոցի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Աջափնյակի բաժնի.

թ. Դավիթաշենի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Դավիթաշենի բաժնի.

ժ. Վանաձոր քաղաքի Տարոնի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Վանաձոր 1 բաժնի.

ժա. Վանաձոր քաղաքի Բազումի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Վանաձոր 2 բաժնի.

ժբ. Գուգարքի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Վանաձոր 3 բաժնի.

ժգ. Սպիտակի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Սպիտակի բաժնի.

ժդ. Թումանյանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Թումանյանի բաժնի.

ժե. Թալինի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Թալինի բաժնի.

ժզ. Աշտարակի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Աշտարակի բաժնի.

ժէ. Արտաշատի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Արտաշատի բաժնի.

ժը. Մասիսի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Մասիսի բաժնի.

ժթ. Բաղրամյանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Բաղրամյանի բաժնի.

ի. Վաղարշապատի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Վաղարշապատի բաժնի.

իա. Գավառի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Գավառի բաժնի.

իբ. Կոտայքի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Աբովյանի բաժնի.

իգ. Գորիսի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Գորիսի բաժնի.

իդ. Մեղրիի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Մեղրիի բաժնի.

իե. Սիսիանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Սիսիանի բաժնի.

իզ. Ջերմուկի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Ջերմուկի բաժնի.

իէ. Իջևանի անձնագրային բաժանմունքը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Իջևանի բաժնի.

իթ. Դիլիջանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Դիլիջանի բաժնի.

լ. Նոյեմբերյանի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Նոյեմբերյանի բաժնի.

լա. Տավուշի անձնագրային խումբը՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության Տավուշի բաժնի:

3. Դադարեցնել սույն հրամանի 2-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով վերակազմակերպվող ստորաբաժանումների գործունեությունը, իսկ սույն հրամանի 2-րդ կետով նախատեսված վերակազմակերպվող ստորաբաժանումների կողմից իրենց մոտ առկա փաստաթղթերը և նյութերը փոխանցել համապատասխան ստորաբաժանումներին:

4. Սահմանել, որ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ստորաբաժանումը կարող է ունենալ նվազագույնը 4 հաստիքային միավոր:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 6-L հրամանը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ 2-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում այդ ենթակետերում նշված պահից:

Վահե Ղազարյան

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
16.01.2024թ.

Հավելված
Ներքին գործերի նախարարի
2024 թվականի հունվարի 16 -ի
N 11-Լ հրամանի

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) Ներքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ենթակա մարմին է:

2. Ծառայությունը ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Ծառայությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Ծառայության անվանումն է՝

1) հայերեն՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն.

2) ռուսերեն՝ Служба миграции и гражданства.

3) անգլերեն՝ Migration and Citizenship Service.

4) ֆրանսերեն՝ Service de Migration et de Citoyenneté:

5. Ծառայությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Ծառայությունը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Ծառայության կառուցվածքը բաղկացած է ծառայության պետի, ծառայության պետի տեղակալների, ծառայության պետի օգնականի պաշտոններից և կառուցվածքային ստորաբաժանումներից:

7. Ծառայությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հանձնվել ենթակա պետական կազմակերպություններ:

8. Ծառայությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

9. Ծառայության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս 10/17 շենք:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

10. *Ծառայության նպատակներն են՝*

1) միգրացիայի ոլորտում պետական քաղաքականության իրականացման ապահովումը.

2) միգրացիոն գործընթացների կառավարումը.

3) քաղաքացիության ձեռքբերման, դադարեցման, անձանց փաստաթղթավորման և նույնականացման համակարգերի գործունեությունը.

4) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների իրացումը.

5) բնակչության պետական ռեգիստրի և ընտրողների ռեգիստրի գործունեության ապահովումը, անձի ինքնության ամրագրումը բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայության համարանիշի ձևավորման միջոցով, անձի ինքնության հավաստումը փաստաթղթավորման և այլ միջոցներով.

6) թվայնացված ծառայությունների գործունեության ապահովումը և զարգացումը:

11. *Ծառայության խնդիրներն են՝*

1) միգրացիոն գործընթացների կառավարման, օտարերկրյա քաղաքացիներին, փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակության (գտնվելու) իրավունքի, օտարերկրացիների կամավոր վերադարձի և արտաքսման, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի, փախստականի կարգավիճակի ճանաչման և ապաստանի տրամադրման ապահովումը.

2) քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման, անձնագրային միասնական համակարգի գործունեության, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, հանրային ծառայությունների համարանիշի հատկացման, անձանց ըստ բնակության վայրի հաշվառման իրականացման, բնակչության պետական և ընտրողների ռեգիստրների վարման ու ընտրողների ցուցակների կազմման ապահովումը.

3) Ծառայության կողմից վարվող էլեկտրոնային հարթակների զարգացման և մատուցվող ծառայությունների բարելավման, ինչպես նաև Ծառայության կողմից իրականացվող գործառույթների թվայնացման կազմակերպման ուղղությամբ առաջարկությունների մշակումը և ներկայացումը:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12. Ծառայության գործառույթներն են՝

1) միգրացիայի պետական քաղաքականության իրականցման համակարգման շրջանակներում կազմակերպում է միջգերատեսչական քննարկումներ.

2) ապահովում է ոլորտի ռազմավարական ծրագրերի իրականացումը, մշակում դրանցով առաջ քաշված հիմնախնդիրների լուծման մեխանիզմները, մշտադիտարկում Ծառայությանը վերաբերելի մասով ծրագրերի իրականացման ընթացքը, կազմում է ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ.

3) վերլուծության արդյունքում ներկայացնում է քաղաքականության մշակման, բարելավման առաջարկություններ.

4) Ծառայության գործունեության ընթացքում առաջ եկած խնդիրների օրենսդրական լուծման ուղղությամբ ներկայացնում է առաջարկություններ.

5) Ծառայության գործունեությանն առնչվող իրավական ակտերի և միջազգային պայմանագրերի վերաբերյալ ներկայացնում է կարծիքներ.

6) մասնակցում է միգրացիոն իրավիճակի մոնիթորինգի նպատակով վերլուծությունների կատարմանը, ստանդարտ վիճակագրական ձևերի մշակմանը և դրանց հրապարակման աշխատանքներին.

7) բարելավում է քաղաքացիների սպասարկման և իրականացվող վարույթների արդյունքում առաջացած փաստաթղթերի որակը.

8) իրականացնում է Ծառայության կողմից մատուցվող ծառայությունների թվայնացմանն ուղղված ծրագրեր, բարելավում Ծառայության կողմից վարվող թվային հարթակները.

9) օրենքով սահմանված կարգով տրամադրում է Հայաստանի Հանրապետության մուտքի վիզաներ.

10) իրականացնում է e-visa համակարգի միջոցով ստացված դիմումների վերաբերյալ վարույթները, պատասխանում է վերադարձի վկայականների տրամադրման վերաբերյալ հարցումներին.

11) ընդունում, սահմանված կարգով ընթացք տալիս և ձևակերպում է օտարերկրացու ՀՀ մուտքի վիզա ստանալու հրավերները, իրականացնում հրավերների հաստատում և հաշվառում.

12) օրենքով սահմանված կարգով իրականացնում է կացության կարգավիճակ ստանալու դիմումների վարույթը և դրանց վերաբերյալ կայացնում է որոշումներ.

13) երկարաձգում է ՀՀ ժամանած օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ մուտքի վիզաների, կացության կարգավիճակների ժամկետները"

14) օրենքով սահմանված կարգով իրականացնում է ապաստան և փախստականի կարգավիճակ ստանալու վերաբերյալ դիմումների վարույթը և դրանց վերաբերյալ կայացնում է որոշումներ.

15) ապահովում է ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորումը, տրամադրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավական, սոցիալական և այլ բնույթի օժանդակություն.

16) հավաքագրում և մշակում է ապաստան հայցողի ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն.

17) իրականացնում է կայացվող որոշումների մշտադիտարկում.

18) իրականացնում է օտարերկրացի աշխատողի ներգրավման միասնական էլեկտրոնային հարթակով ստացված դիմումների վարույթ.

19) Ծառայության կողմից իրականացվող վարույթների արդյունքում, ինչպես նաև համագործակցելով այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ հայտնաբերում է ՀՀ-ում անօրինական գտնվող անձանց, հաշվառում նշված կատեգորիայի անձանց, իրականացնում նրանց կամավոր վերադարձի ու արտաքսման ապահովման համար պահանջվող ընթացակարգերը.

20) ՀՀ-ում անօրինական գտնվող օտարերկրացիների նկատմամբ իրականացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթներ, կայացնում որոշումներ.

21) իրականացնում է ռեադմիսիոն համաձայնագրերով նախատեսված՝ օտարերկրյա քաղաքացիների վերադարձման գործառույթները.

22) ընդունում և վարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումները (այդ թվում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացված) և իրականացված վարույթների արդյունքում կազմված եզրակացությունները համապատասխան առաջարկությամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահին.

23) ՀՀ Նախագահի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումները բավարարելու դեպքում՝ ապահովում է երդման արարողության իրականացումը, իսկ դադարեցնելու դիմումները բավարարելու դեպքում՝ տրամադրում է համապատասխան տեղեկանքներ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցում է ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց քաղաքացիությունը դադարեցնելու գործընթաց, ապահովում դրա հետագա ընթացքը.

24) Ծառայության կողմից իրականացվող վարույթների շրջանակներում ապահովում է պատշաճ ծանուցումը.

25) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հարցումների, քաղաքացիների, այլ անձանց և կազմակերպությունների դիմումների հիման վրա կատարում է ուսումնասիրություններ, պարզում անձի ՀՀ քաղաքացի հանդիսանալու կամ չհանդիսանալու հանգամանքը, տրամադրում օրենսդրությամբ սահմանված ձևի տեղեկանք կամ տեղեկատվություն, այդ տեղեկատվության տրամադրման իրավական հիմքերի վերաբերյալ պարզաբանումներ.

26) իրականացնում է ռեադմիսիոն համաձայնագրերով նախատեսված՝ անձի քաղաքացիության պարզման, նույնականացման և հետընդունման գործառույթները.

27) ընդունում է անձին Հայաստանի Հանրապետության քաղաքացի ճանաչելու, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման հարցերի մասին դիմումները, կատարում է հարցումներ անձի այլ պետության քաղաքացիություն ունենալու վերաբերյալ, տեղեկատվության հիման վրա կազմում է որոշում.

28) օրենքով սահմանված դեպքերում և կարգով քաղաքացիներին, փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրում է անձը հաստատող փաստաթղթեր.

29) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած, Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող և մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակվող անձին Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվելիս՝ իրականացնում է բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառելու գործընթացներ.

30) ապահովում է օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց անձնագիր տրամադրելու գործընթացում համապատասխան թույլտվությունների ստացումը և Ծառայության պետի որոշման հիման վրա փաստաթղթերի տրամադրումը.

31) օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց անձնագիր տրամադրելու գործընթացում համապատասխան թույլտվությունների ստացում, Ծառայության պետի դրական որոշման հիման վրա փաստաթղթերի տրամադրում

32) Ծառայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է վարույթների արդյունքում պատրաստվող փաստաթղթերի տպագրության համար անհրաժեշտ տվյալները.

33) իրականացնում է վարույթների արդյունքներում պատրաստվող բոլոր անձը հաստատող փաստաթղթերի տպագրումը և տրամադրումը համապատասխան ստորաբաժանումներին, տպագրված փաստաթղթերի հաշվառումը, ըստ անհրաժեշտության՝ առաքումը, անձը հաստատող փաստաթղթերի տպագրման ժամանակ խոտանված փաստաթղթերի հաշվառումը, ակտավորումը և ոչնչացումը.

34) ապահովում է պետական կառավարման մարմինների հետ ռեգիստրի համագործակցությունը, վերլուծում է ռեգիստրի վարման աշխատանքները և իրականացնում է այդ աշխատանքների համակարգումը.

35) բնակչության պետական ռեգիստրից իրավասու մարմիններին, կազմակերպություններին և անձանց տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն.

36) բնակչության պետական ռեգիստրի համակարգ տվյալների մուտքագրման և փոփոխման նպատակով օգտվողների համար սահմանում և տալիս է համապատասխան ծրագրային իրավասություններ.

37) իրականացնում է ՀՀ ընտրողների ռեգիստրի վարման աշխատանքները, ապահովում ընտրողների ցուցակները կազմելու և ճշգրտելու աշխատանքները.

38) համակարգում և ըստ անհրաժեշտության ղեկավարում է Ծառայության տարածքային ստորաբաժանումների աշխատանքը ընտրողների ցուցակների կազմման գործընթացում.

39) կազմակերպում է ընտրողներին քվեարկության օրվա, տեղի և ժամանակի մասին ծանուցագրեր պատրաստելու և առաքելու նպատակով տեղեկատվության ստացումը և տրամադրումը.

40) ապահովում է Ծառայությունում առկա տվյալների շտեմարանների ամբողջականությունը և ճշգրտությունը, կատարում է օգտագործվող շտեմարանների համալրում և թարմացում, ապահովում է անխափան կապ Ծառայության ստորաբաժանումների միջև և այլ իրավասու մարմինների հետ.

41) հարուցված վարույթների շրջանակներում իրականացնում է անձի ինքնության պարզումը.

42) օրենքով սահմանված դեպքերում և կարգով տրամադրում է հանրային ծառայության համարանիշի, հաշվառման վերաբերյալ և օրենքով սահմանված այլ տեղեկանքներ.

43) կիրառում է հարուցած վարույթի ընթացքում Ծառայության գործողությունների իրավաչափության պահպանման և օրենքների պահանջների միատեսակ կատարման նպատակով ընդունված ստանդարտները՝ դրանք կանոնակարգելու, միասնական վարչարարություն ապահովելու վերաբերյալ.

44) կազմում է Ծառայության գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններ, մշակում Ծառայության թվային հարթակներից վիճակագրական հաշվետվությունների ստացման համակարգեր.

45) մասնակցում է Ծառայության գործառույթների շրջանակներում թվայնացման գործընթացներին, աշխատանքներ է տանում թվային հարթակների կատարելագործման ուղղությամբ.

46) քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն, իրականացնում զանգերի սպասարկման աշխատանքներ.

47) վարում է Ծառայության սոցիալական մեդիան, պաշտոնական կայքը.

48) ուսումնասիրում է սպասարկման և հաղորդակցության ոլորտում ներկայացված բողոքները և ապահովում դրանց հետագա ընթացքը, բարելավում ծառայությունների մատուցման որակը.

49) Ծառայության ստորաբաժանումների աշխատանքի վերաբերյալ քաղաքացիների բողոքների քննարկման արդյունքում, բավարար հիմքերի դեպքում, ուղարկում ծառայողական քննության.

50) ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված առերևույթ հանցագործությունների դեպքերով հաղորդումների ներկայացնելիս՝ քննարկում է քրեական վարույթ նախաձեռնելու հարցը.

51) մասնակցում է դատարաններում Ծառայությանը գործունեությանն առնչվող դատական հայցերի քննարկմանը.

52) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Ծառայության կառավարումն իրականացնում է ներքին գործերի նախարարը (այսուհետ՝ նախարար):

14. Նախարարը՝

1) հաստատում է ծառայության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է ծառայության գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է ծառայության գործունեության վերահսկողությունը.

4) լսում է ծառայության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

5) Ծառայությունը ղեկավարում է ծառայության պետը, որին նախարարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

15. Ծառայության պետին անմիջական հաշվետու են ծառայության պետի տեղակալները, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարները, օգնականը և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16. Ծառայության պետը հաշվետու է կառավարությանը, վարչապետին և նախարարին:

17. Ծառայության պետը՝

1) ղեկավարում է Ծառայության գործունեությունը և պատասխանատու է Ծառայության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է Ծառայության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կառավարումը.

4) օրենքով կամ ծառայության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է ծառայության համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) հաստատում է Ծառայության և Ծառայության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ներքին կարգապահական կանոնները.

6) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալների հանձնարարականները.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում ծառայության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

9) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

10) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է իրավական ակտեր, ինչպես նաև Ծառայության առջև դրված խնդիրների ու գործառույթների պատշաճ իրականացման նպատակով տալիս հրամաններ և բանավոր կամ գրավոր հանձնարարականներ.

18. Ծառայության պետն ունի չորս տեղակալ: Ծառայության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է առավել երկար ստաժ ունեցող տեղակալը:

19. Ծառայության հաստիքացուցակը ծառայության պետի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

20. Ծառայության պետի տեղակալը՝

1) գործում է ծառայության պետից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն (գործունեությունը) իրեն հանձնարարված ոլորտում.

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակայությանը հանձնված կազմակերպություններին փոխանցում է ծառայության պետի հանձնարարականները, ապահովում է ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների կողմից ծառայության պետի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով ծառայության պետին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ծառայության պետին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է ծառայության պետի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

21. Ծառայության վարչական ակտերը, գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

22. Ծառայությունն ունի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ: Դրանք են՝

1) Քաղաքացիության վարչությունը.

2) Անձնագրային վարչությունը.

3) Ապաստանի վարչությունը.

4) Օտարերկրացիների վարչությունը.

5) Կազմակերպա-վերլուծական, վիճակագրության և խորհրդատվության վարչությունը.

6) Բնակչության տվյալների մշակման վարչությունը.

7) Շենգավիթի բաժինը.

8) Արաբկիրի բաժինը.

9) Նոր Նորքի բաժինը.

10) Ավանի բաժինը.

11) Քանաքեռ-Զեյթունի բաժինը.

12) Մալաթիայի բաժինը.

13) Էրեբունու բաժինը.

14) Կենտրոն 1 բաժինը.

15) Կենտրոն 2 բաժինը.

16) Աջափնյակի բաժինը.

17) Դավիթաշենի բաժինը.

18) Նուբարաշենի բաժինը.

19) Գյումրի 1 բաժինը.

20) Գյումրի 2 բաժինը.

21) Գյումրի 3 բաժինը.

22) Արթիկի բաժինը.

23) Աշոցքի բաժինը.

24) Վանաձորի 1 բաժինը.

25) Վանաձոր 2 բաժինը.

26) Վանաձոր 3 բաժինը.

27) Սպիտակի բաժինը.

28) Տաշիրի բաժինը.

29) Թումանյանի բաժինը.

30) Թալինի բաժինը.

31) Ապարանի բաժինը.

32) Աշտարակի բաժինը.

33) Վեդիի բաժինը.

34) Արտաշատի բաժինը.

35) Մասիսի բաժինը.

36) Արմավիրի բաժինը.

37) Բաղրամյանի բաժինը.

38) Վաղարշապատի բաժինը.

39) Սևանի բաժինը.

40) Գավառի բաժինը.

41) Մարտունու բաժինը.

42) Հրազդանի բաժինը.

43) Աբովյանի բաժինը.

44) Եղվարդի բաժինը.

45) Գորիսի բաժինը.

46) Մեղրիի բաժինը.

47) Սիսիանի բաժինը.

48) Կապանի բաժինը.

49) Եղեգնաձորի բաժինը.

50) Ջերմուկի բաժինը.

51) Իջևանի բաժինը.

52) Դիլիջանի բաժինը.

53) Նոյեմբերյանի բաժինը.

54) Տավուշի բաժինը:

23. Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է ծառայության պետը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

VI. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

24. Ծառայության գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

25. Ծառայությանը հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը:

26. Ծառայությունը տիրապետում, օգտագործում է իրեն հանձնված գույքը: